

ՀԱՅ ՈՍԿԵՐԻՉՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆԻ ԱՅՑԸ ՊԵՅՐՈՒԹ

Posted on July 22, 2012 by Keghart



Category: [Opinions](#)



Հարցազրոյց՝ Պրն. Արտակ Ուտումեանին Հետ

Համօ Մոսկօֆեան, Պէյրուս, 22 Յուլիս 2012



"Ամենայն քաջառողջութիւն... Խաղաղութիւն Լիբանանի մէջ, որ ամենէն կարեւորն է բռնկալից տարածաշրջանի մը մէջ, ուր ամենուրեք խոչընդոտներ կրնան ըլլալ: Երջանկութիւն, խաղաղութիւն, որ մեր հայ քոյրերն ու եղբայրները բարգաւաճին այստեղ: Ամենայն բարիք բոլորիդ:"

ՀԱՐՅՈՒՄ.- Պրն. Ուտումեան, որպէս AJA-ի (Համաշխարհային Հայ Ոսկերիչներու Միութեան) Գործադիր տնօրէն, ինչպէս են ձեր տպաւորութիւնը Սփիւռքի "մայրաքաղաք" Պէյրուսի մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Պէյրուսի մասին շատ լսած էի եւ ինչպէս հայրս կ'ըսէր՝ այս Մերձաւոր Արեւելքի Փարիզն է...: Երկակի տպաւորութիւն էր. մէկ կողմէ գեղեցիկ բնութիւն, գեղեցիկ շէնքեր եւ պատերազմի արդիւնքներ, որոնք չեն վերացուած, որոշ չափով անկանոնութիւն՝ լոյսի եւ ելեկտրականութեան չլուծուած հարցեր, սակայն կը գերիշխէ դրականը:

Հարցազրոյց՝ Պրն. Արտակ Ուտումեանին Հետ

Համօ Մոսկօֆեան, Պէյրուս, 22 Յուլիս 2012



"Ամենայն քաջառողջութիւն... Խաղաղութիւն Լիբանանի մէջ, որ ամենէն կարեւորն է բռնկալից տարածաշրջանի մը մէջ, ուր ամենուրեք խոչընդոտներ կրնան ըլլալ: Երջանկութիւն, խաղաղութիւն, որ մեր հայ քոյրերն ու եղբայրները բարգաւաճին այստեղ: Ամենայն բարիք բոլորիդ:"

ՀԱՐՅՈՒՄ.- *Պրն. Ուտոմեան, որպէս AJA-ի (Համաշխարհային Հայ Ոսկերիչներու Միութեան) Գործադիր տնօրէն, ինչպէս եւ ձեր տպաւորութիւնը Սփիւռքի “մայրաքաղաք” Պէյրութի մասին:*

ՊԱՏԱՍԽԱՆ.- Պէյրութի մասին շատ լսած էի եւ ինչպէս հայրս կ’ըսէր՝ այս Մերձաւոր Արեւելքի Փարիզն է...: Երկակի տպաւորութիւն էր. մէկ կողմէ գեղեցիկ բնութիւն, գեղեցիկ շէնքեր եւ պատերազմի արդիւնքներ, որոնք չեն վերացուած, որոշ չափով անկանոնութիւն՝ լոյսի եւ ելեկտրականութեան չլուծուած հարցեր, սակայն կը գերիշխէ դրականը:

ՀԱՐՅՈՒՄ.- *Այս այցելութեան ընթացքին որո՞նց հետ հանդիպեցաք եւ ի՞նչ էր ձեր առաքելութեան նպատակը, AJA-ի նախագահ Գագիկ Գեորգեանի Լիբանան կատարած պատմական այցէն ետք:*

ՊԱՏԱՍԽԱՆ.- Պարոն Գագիկ Գեորգեանի յանձնարարութեամբ այստեղ կը գտնուիմ, որպէսզի հայ ոսկերիչներու հետ հանդիպիմ, քննարկեմ անոնց հետ համագործակցութեան հարցերը: Բազմիցս հանդիպումներ ունեցանք ամէն կարգի հայ ոսկերիչներու հետ: Մասնակցեցայ լիբանանեան AJA-ի խորհուրդի նիստին, շարք մը հարցեր քննարկուեցան, ինչպէս Հայաստանի ոսկերչութեան ցուցահանդէսի մասնակցութիւնը, մեր ամսագրին հետ համագործակցութեան, տեղի ոսկերիչներու եւ համաշխարհային Հայ Ոսկերիչներու Միութեան եւ Հայաստանի հետ կապերու ամրապնդումը: Շատ մեծ ու կարեւոր գործեր ունինք իրագործելիք: Կարեւոր եւ յուսադրիչ էր երբ ստեղծուեցաւ երիտասարդական խորհուրդ, որուն հետ հանդիպում ունեցայ, որուն ակնկալիքները լսեցինք եւ որոնց առջեւ խնդիրներ դրինք՝ կապուած այստեղի եւ AJA-ի կեդրոնական խորհուրդին հետ կապուած: Եղայ շատ ոսկերիչներու գործատեղիներուն եւ պահեստանոցներուն մէջ եւ բարձր տպաւորութիւն ձգեցին անոնց վարպետութիւնն ու ստեղծագործութիւնները: Պատմականօրէն, մենք շատ լսած ենք որ Պէյրութ եղած է եւ կը մնայ ոսկերչական ավանդոյթները պահպանող կեդրոններէն մէկը: Ճիշդ է որ դժուար ժամանակներ են, սակայն մենք եւ AJA-ը ամէն ինչ պետք է ընենք որ օգնենք հայ ոսկերիչներուն՝ միջոցներ տրամադրելու ոչ միայն գոյութիւն պահպանելու, այլեւ զարգացնելու իրենց գործը:

ՀԱՐՅՈՒՄ.- *Ինչպէս տեղեկացանք, հրաւերներ փոխանցած էք մասնակցելու այս աշխան, Մոսկուայի եւ Երեւանի մէջ տեղի ունենալիք ոսկերչական միջազգային ցուցահանդէսներուն:*

ՊԱՏԱՍԽԱՆ.- Մոսկուայի ցուցահանդէսը մեծ հնարաւորութիւններ կու տայ մասնակից ընկերութիւններուն: «Էսթեթ» հաստատութիւնը, որուն նախագահն է Նաեւ Պրն. Գագիկ

Գեորգեան, մեծ հնարաւորութիւններ ունի ռուսական շուկային մէջ: Մենք պատրաստ ենք ամէն ինչով օգնելու Լիբանանի հայ ոսկերիչներուն՝ ռուսական շուկայ մտնելու համար: Իսկ ինչ կը վերաբերի Երեւանի «Շօ» ցուցահանդէսին, ապա եւ որպէս հայրենասիրական նպատակներէ մղուած, կ'օժանդակենք Հայաստանի մէջ ոսկերչութեան զարգացման: Առանց ականդոյթ ստեղծելու ցուցահանդէսային հարցերուն մէջ, մենք չենք կրնար սպասել որ երկիրը կրնայ դառնալ ոսկերչութեան կեդրոն: Միայն աշխատանքն ու արտադրանքը բաւարար չեն: Մենք պետք է ցուցահանդէսներ կազմակերպենք, տարբեր երկիրներէ մարդիկ հրաւիրենք (գնորդներ եւ մասնակիցներ): Մենք անցեալ տարի, առաջինը յաջողութեամբ կազմակերպեցինք: Այս տարի շատ անելի մեծ զարգացում պետք է ունենայ այդ ժողովն ու ցուցահանդէսը: Հրաւերներ ուղարկուած են աշխարհի հայ թէ օտար ոսկերիչներուն, Համաշխարհային Ոսկերիչներու Միութեան նախագահ Պրն. Քաթրանօ Քավալերին: Ամէն ինչ կը գործադրենք որ մասնակիցները ունենան ամենէն յարմար պայմանները, մասնակցելու եւ հայրենիքը տեսնելու, ծանօթանալու, կապերը ամրապնդելու համար:

ՀԱՐՑՈՒՄ.- *Իսկ որեւէ խօսք ունի՞ք փոխանցելու մեր ընթերցողներուն:*

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ամենայն քաջառողջութիւն, որպէս մաղթանք իմ եւ Պրն. Գեորգեանին կողմէ: Խաղաղութիւն Լիբանանի մէջ, որ ամենէն կարեւորն է բռնկալից տարածաշրջանի մը մէջ, ուր ամենուրեք խոչընդոտներ կրնան ըլլալ: Երջանկութիւն, խաղաղութիւն, որ մեր հայ քոյրերն ու եղբայրները բարգաւաճին այստեղ: Ամենայն բարիք բոլորիդ:

